


Հայկական Կարմիր խաչի ընկերություն
ՀՀ, Երևան, 0015, Պարոնյան 21/1
Հեռ.՝ +374 60 625050, ֆաքս՝ +374 60 62 50 72
www.redcross.am, էլ.փոստ՝ redcross@redcross.am
<https://www.facebook.com/ArmenianRedCrossSociety>
<https://twitter.com/RedCrossArmenia>

Armenian Red Cross Society
21/1 Paronyan str., Yerevan, Armenia, 0015
Phone: +374 60 625050, fax: +374 60 62 50 72
www.redcross.am, e-mail: redcross@redcross.am
<https://www.facebook.com/ArmenianRedCrossSociety>
<https://twitter.com/RedCrossArmenia>



ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ARMENIAN RED CROSS SOCIETY

ՀԿԽԸ
ARCS
Տարեկան զեկույց
Annual report

2015



ICRC

Տպագրված է ԿԻՄԿ աջակցությամբ
Printed with the support of ICRC

Երևան 2016 Yerevan

Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային
շարժման հիմնարար սկզբունքները

Fundamental Principles of the Red Cross and
Red Crescent International Movement

ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
HUMANITY

ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
IMARTIALITY

ՉԵՉՈՔՈՒԹՅՈՒՆ
NEUTRALITY

ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ
INDEPENDENCE

ԿԱՄԱԿՈՐՈՒԹՅՈՒՆ
VOLUNTARY SERVICE

ԵԶԱԿԻՈՒԹՅՈՒՆ
UNITY

ՀԱՄԸՆԴՅԱՆՐՈՒԹՅՈՒՆ
UNIVERSALITY



2015 թվականը Հայկական Կարմիր խաչի ընկերության համար նշանակալի տարի էր՝ ՀԿԽ Ընկերությունը 95 տարեկան է: Դա հնարավորություն տվեց ևս մեկ անգամ վերագնահատելու և վերաբժնորդելու մեր անցած ուղին, հաղթահարած դժվարություններն ու ձեռքբերումները:

Այս տարիների ընթացքում Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, հանդիսանալով օժանդակ կառույց կառավարությանը՝ մարդասիրության ոլորտում, շարունակել է իրագործել իր առաքելությունը Հայաստանում՝ նվազեցնելով ազգաբնակչության խոցելիությունը մարդասիրության ուժի մոբիլիզացմամբ, նախապատրաստվելով դիմակայելու այն իրավիճակներին, որոնք կարող են ազգաբնակչության խոցելիության պատճառ դառնալ, ցուցաբերելով անհրաժեշտ օգնություն՝ սատարելով սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում գտնվող մարդկանց:

2015 թվականի ընթացքում մենք շարունակել ենք մեր գործունեությունը հետևյալ ուղղություններով՝ սոցիալական աջակցություն և առողջապահություն, արեւմտերի կառավարում, բնակչության տեղաշարժ, առաջին օգնություն, Կարմիր խաչի

2015 was a significant year for Armenian Red Cross Society: the National Society is 95 years old. It gave us another opportunity to reassess and revalue the way passed, difficulties, that had been overcome and progress made. During these years, Armenian Red Cross Society, as an auxiliary to the public authorities in humanitarian field, continued to implement its mission in Armenia, to reduce the vulnerability of the population, through mobilization of the power of humanity, to get prepared to cope with the situations, which may cause vulnerability among the population, as well as by assisting people made vulnerable by harsh socio-economic conditions

In 2015, we have continued our activities in the following main directions: Social Support and Health Care, Disaster Management, Population Movement, First Aid, Dissemination of Red Cross Fundamental Principles and Humanitarian Values, Tracing and Restoring Family Links, Youth and International Activities.

In 2015, ARCS started new cooperation with Swiss Red Cross. Thanks to this cooperation, new social-health model of Community

սկզբունքների և մարդասիրական արժեքների տարածում, որոնում և ընտանեկան կապերի վերականգնում, երիտասարդական, միջազգային համագործակցություն:

2015 թվականից ՀԿԽԸ-ն նոր համագործակցություն է սկսել Շվեյցարական Կարմիր խաչի հետ, որի շնորհիվ Համայնքի վրա հիմնված ինտեգրացված տնային խնամքի սոցիալ-առողջապահական նոր մոդել կներդրվի Լոռու և Շիրակի մարզերում: Դա հնարավորություն կտա ծառայություններ մատուցելու շահառուների նոր խմբի և զարգացնելու Ազգային ընկերության կարողություններն այս ոլորտում:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը շարունակել է Սիրիայի ճգնաժամի հետևանքով Հայաստան տեղափոխված սիրիահայերի աջակցության և ինտեգրման ուղղությամբ իրականացվող գործունեությունը: Տնտեսական և մշակութային ինտեգրմանն ուղղված ծրագրերը նոր հնարավորություններ են ստեղծում մեր հայրենակիցների համար, որպեսզի նրանք կարողանան վերջնականապես հաստատվել Հայաստանում:

Ազգային ընկերությունը լուրջ քայլեր է իրականացրել նաև Ռեսուրսների մոբիլիզացիայի ուղղության զարգացման համար՝ Կարմիր խաչի միջազգային ֆեդերացիայի աջակցությամբ իրականացնելով պոտենցիալ դոնորների շուկայի ուսումնասիրություն: Այդ ուսումնասիրության հիման վրա ՀԿԽԸ-ն կունենա հստակ երկարաժամկետ ռազմավարություն՝ ռեսուրսների մոբիլիզացիայի գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու համար, որը հնարավորություն կտա բարելավելու մեր շահառուներին մատուցվող ծառայությունների որակը և ընդլայնելու նրանց թիվը:

2015 թվականն արդյունավետ է եղել և՛ միջազգային գործունեության ակտիվացման, և՛ պետական մարմինների հետ համագործակցության խորացման համար: Հայկական Կարմիր խաչի ընկերությունը շնորհակալագիր ստացավ Արտակարգ իրավիճակների նախարարության կողմից՝ Աղետների ռիսկի նվազեցման ոլորտում ունեցած ներդրման համար:

Մենք շնորհակալ ենք այն բոլոր կազմակերպություններին, անհատներին, բարերարներին ու կամավորներին, որոնք վստահում և աջակցում են մեզ: Նրանց մարդասիրական ոգին և նվիրումն են ոգեշնչում մեզ և հնարավորություն տալիս իրագործելու մեր մարդասիրական առաքելությունը:

based integrated home care will be introduced in Lori and Shirak regions. It will allow to provide services with new group of the beneficiaries and develop National Society Capacities in this sphere. Armenian Red Cross Society continued activities towards Syrian Armenians support and integration, who had fled to Armenia as a result of Syrian Crisis. Projects including economic and cultural integration components create new opportunities for our counterparts, so as they can establish in Armenia. The National Society has made serious steps for Resource Mobilization Direction development, conducting potential donors' Market Research, with the support of IFRC. According to this research, ARCS will develop precise long-term strategy, to organize resource mobilization more efficiently, which will allow to improve the quality of the services we provide to our beneficiaries and to enlarge their number.

The year was very effective both for international activities, and for strengthening cooperation with the state bodies. ARCS received acknowledgement by RA Ministry of Emergency Situations for its input in Disaster Risk Reduction sphere.

We thank all those organizations, individuals, donors and volunteers, who trust in and support us. Their humanitarian spirit and devotion inspire and enables to implement our humanitarian mission.



Մխիթար Մնացականյան
Նախագահ
Mkhitar Mnatsakanyan
President



Աննա Եղիազարյան
Գլխավոր քարտուղար
Anna Yeghiazaryan
Secretary General



Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԽԸ) հիմնադրվել է 1920թ. մարտի 19-ին Սպանդարատ Կամսարականի կողմից:

The Armenian Red Cross Society (ARCS) was founded on March 19, 1920 by Spandarat Kamsarakan.

ՀԿԽԸ կայացման ուղին

Կարմիր խաչն իր մարդասիրական առաքելությունը Հայաստանում սկսել է 1877թ., երբ Ֆիննական Կարմիր խաչի դաշտային հոսպիտալները հիմնվեցին Երիվան նահանգում, ինչպես նաև 1896թ., երբ Ամերիկյան Կարմիր խաչի կամավոր Կլարա Բարտոնը օգնություն ցուցաբերեց Օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ տառապող հայ բնակչությանը:

Review of ARCS foundation

The Humanitarian Mission of Red Cross in Armenia started in 1877, when field hospitals of the Finnish Red Cross were established in Erivan region, as well as in 1896, when Clara Barton, a volunteer of the American Red Cross was assisting heavily suffering Armenian population in Osmanian Turkey.

ՀՀ Պառլամենտը վավերացրեց ՀԿԽԸ կանոնադրությունը	1920	The Parliament of RA ratified the Statutes of ARCS
ՀԿԽԸ ժամանակավոր դադարից հետո վերսկսեց գործունեությունը	1921	The activities of ARCS were resumed after temporary cancellation
Լոռիի դաշտային Հայաստանի ժողովուրդի որոշմամբ շարունակվեց ՀԿԽԸ գործունեությունը և վերահաստատվեց կանոնադրությունը	1922	The activities of ARCS were resumed and its Statutes was re-approved by the Government of Armenian Soviet Socialist Republic
ՀԿԽԸ դարձավ ԽՍՀՄ Կարմիր խաչի և Կարմիր Մահիկի Ընկերությունների դաշինքի անդամ	1925	ARCS became a member of the Alliance of Red Cross and Red Crescent Societies of USSR
ՀԿԽԸ 14-րդ համագումարում ՀԿԽԸ հռչակվեց որպես ՀՀ գործող Կարմիր խաչի միակ ազգային ընկերություն	1992	ARCS was declared as the only National Society in the country during the 14th session of General Assembly of ARCS
ՀՀ-ում բացվեց ՀԿԽԸ «Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոնը	1992	“Gratis” International Rehabilitation Center of ARCS was established in RA
ՀՀ միացավ 1949թ. ժնևի 4 կոնվենցիաներին և դրա 1977թ. առաջին և երկրորդ Լրացուցիչ արձանագրություններին	1993	RA ratified the Geneva Conventions of 1949 and its first and second Additional Protocols of 1977
ՀԿԽԸ ճանաչվեց ՀՀ նախագահի հրամանագրով	1993	ARCS was recognized by the RA President’s statement
ՀԿԽԸ ճանաչվեց Կարմիր խաչի Միջազգային կոմիտեի կողմից որպես 166-րդ ազգային ընկերություն	1995	ARCS was recognized by the International Committee of the Red Cross and the 166th National Society
ՀԿԽԸ դարձավ Կարմիր խաչի և Կարմիր Մահիկի Ընկերությունների Միջազգային ֆեդերացիայի անդամ	1995	ARCS was admitted to the International Federation of Red Cross and Red Crescent Societies as its full member
Սոլֆերինո նահանգի Կարմիր խաչի թանգարանում տեղադրվեց ՀԿԽԸ հուշաքարը	1997	ARCS memorial plate was placed in the Red Cross Museum of Solferino
Ժնևում կայացած ԿԽ/ԿՄ ՄՖ 13-րդ Համագումարում ՀԿԽԸ-ն երկու տարի ժամկետով ընտրվեց ԿԽ/ԿՄ ՄՖ Կազմակերպության զարգացման հանձնաժողովի անդամ	2001	ARCS was elected as member of Organizational Development Commission by the 13th session of IFRC General Assembly
ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Կարմիր խաչի և Կարմիր մահիկի խորհրդանշանների գործածության և պաշտպանության մասին» ՀՀ օրենքը	2002	The National Assembly of RA adopted law on the use and protection of Red Cross and Red Crescent emblems
Ժնևում կայացած ԿԽ/ԿՄ ՄՖ 14-րդ համագումարում ՀԿԽԸ-ն վերընտրվեց ԿԽ/ԿՄ ՄՖ Կազմակերպության զարգացման հանձնաժողովի անդամ	2003	ARCS was re-elected as a member of Organizational Development Commission by the 14th session of IFRC General Assembly in Geneva
Սեուլում կայացած ԿԽ/ԿՄ ՄՖ Համագումարում ՀԿԽԸ Երիտասարդական բաժինն ընտրվեց Երիտասարդական հանձնաժողովի անդամ	2005	ARCS Youth Department was elected as a member of Youth Commission during the session of IFRC General Assembly in Seoul
Ավստրիայում կայացած Եվրոպական համագործակցության հանձնաժողովի ժամանակ ՀԿԽԸ Երիտասարդական բաժինն ընտրվեց որպես կոորդինացման կոմիտեի անդամ	2005	ARCS Youth Department was elected as a member of Coordination Committee by European Coordination Committee in Austria
Աթենքում կայացած հանդիպման ժամանակ ՀԿԽԸ Աղետների կառավարման բաժինն ընդգրկվեց Եվրոպական ԿՄ և ԿՄ ԱԸ-ների սոցիալ-հոգեբանական աջակցության ցանցում	2006	ARCS Disaster Management and Population Movement Department was included as a member in European RC/RC NSs Network for Psychological Support during the meeting in Athens
ՀՀ միացավ ժնևի կոնվենցիաների 2005թ. 3-րդ լրացուցիչ արձանագրությանը:	2011	RA ratified the third Protocol to Geneva Conventions of 2005

ՀԿԽԸ Առաքելությունը

Նվազեցնել ազգաբնակչության խոցելիությունը՝ մարդասիրության ուժի մոբիլիզացմամբ, նախապատրաստվել դիմակայելու այն իրավիճակներին, որոնք կարող են բնակչության խոցելիության պատճառ դառնալ, ցուցաբերել անհրաժեշտ օգնություն՝ սատարելով սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում գտնվող մարդկանց:

Նպատակը

Կազմակերպության հիմնական նպատակն է կանխարգելել և թեթևացնել մարդկային տառապանքները՝ անկախ ազգությունից, ռասսայական, սեռային, դասակարգային պատկանելությունից, կրոնական և քաղաքական հայացքներից:

Նախագահ

Մխիթար Մնացականյան

Գլխավոր քարտուղար

Աննա Եղիազարյան

Պատվավոր նախագահ

Աշոտ Սարգսյան

Պատվավոր անդամներ

Ռիտա Փարսադանյան
Պիեռ Միշո
Գերհարդ Մայեր
Մովսես Պողոսյան
Դերենիկ Դումանյան
Գագիկ Մարտիրոսյան
Գուֆար Կուրման
Հարություն Եսոյան
Վալերի Վարդանյան
Կլաուս Հիլե
Մայքլ Ուիլբե

ՀԿԽԸ նախագահ 1975-1991թթ.
Ֆրանսիական Կարմիր խաչ
Գերմանական Կարմիր խաչ
Գերմանական Կարմիր խաչի ներկայացուցիչ
ՀՀ Առողջապահության նախարար 2012-2014
ՀՀ Պետնախարար 1993-1995
Ռուսական Կարմիր խաչ, փրկարար
ՀԿԽԸ փրկարար
ՀԿԽԸ փրկարար
Բավարական Կարմիր խաչ
Գերմանական Կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգ երկրամասային կազմակերպություն
բահանա, Գթության խոհանոցի ղեկավար

Կառլ Շայդե

Բարերարի կոչում ստացած կազմակերպություններ

Կապանի «Դենո Գոլդ Մայնինգ քամինի» ՓԲԸ
Գերմանական Կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգ երկրամասային կազմակերպություն

Ընդհանուր տեղեկություններ

Մարզային մասնաճյուղ 11
Տարածքային մասնաճյուղ 1
Համայնքային մասնաճյուղ 52
Աշխատակիցներ 70
Անդամներ 3400
Կամավորներ 3200
«Գրասիա» միջազգային վերականգնողական կենտրոն 1
Բարեգործական ճաշարան 3
Առաջին օգնության ուսումնամեթոդական կենտրոն 1
Հյուրանոցային համալիր 1
Տարածաշրջանային բազա 1
Ուսումնական կենտրոն 1

ARCS Mission

To reduce vulnerability of the population through mobilization of the power of humanity, to be prepared to cope with situations, which may cause vulnerability among the population, to provide essential support by assisting people made vulnerable by harsh socioeconomic conditions.

Goal

The overall goal of the Society is to prevent and alleviate human sufferings, regardless of nationality, race, sex, religious beliefs, class and political opinions.

President

Mkhitar Mnatsakanyan

Secretary General

Anna Yeghiazaryan

Honorary President

Ashot Sargsyan

Honorary Members

Rita Parsadanyan ARCS President throughout 1975-1991
Pier Michaud French Red Cross
Gerhard Mayer German Red Cross
Movses Poghosyan German Red Cross representative
Derenik Dumanyan RA Minister of Healthcare 2012-2014
Gagik Martirosyan State Minister, RA 1993-1995
Gaphur Kurmayev Russian Red Cross, Rescuer
Harutyun Yesoyan ARCS, Rescuer
Valeri Vardanyan ARCS, Rescuer
Claus Heike Bavarian Red Cross
Michael Uibel German Red Cross Baden-Wurtemberg Provincial Branch
Karl-Heinz Scheide Priest, Coordinator of Soup Kitchen Program

Benevolent organizations

Deno Gold Mining Company
German Red Cross Baden Wurttemberg Provincial Branch

Overview

Regional Branches 11
Territorial Branches 1
Community Branches 52
Employees 70
Members 3400
Volunteers 3200
“Gratsia” International Rehabilitation Centre 1
Charity kitchens 3
First Aid Training Methodological Centre 1
Hotel Compound 1
Regional Warehouse Base 1
Training Centre 1



ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹՅՈՒՆ

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, նպատակ ունենալով աջակցել պետական համակարգին՝ նվազեցնելու սոցիալապես անապահով մարդկանց խոցելիությունը և բարելավել համայնքների բնակչության առողջական վիճակը, լայնածավալ գործունեություն է ծավալում սոցիալական աջակցության և առողջապահության ոլորտներում

SOCIAL SUPPORT AND HEALTHCARE

With the purpose of assisting the state structures, decreasing social vulnerability of the people in need, as well as improving health conditions of people in communities, the Armenian Red Cross Society implements large-scale activities in social support and healthcare spheres

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հայկական Կարմիր խաչի ընկերությունն իրականացնում է բազմաբնույթ սոցիալական ծրագրեր՝ ուղղված միայնակ, փախստական ծերերի, ևացիոնալ-սոցիալիզմի զոհերի ընտանիքների, առավել կարիքավոր հանրակացարանաբնակ, ծնողազուրկ, ինչպես նաև հաշմանդամ երեխաների սոցիալական վիճակի բարելավմանը: ՀԿԽԸ աշխատանքներն ընդգրկում են մի շարք ոլորտներ՝ բնակչության սոցիալական վիճակի ուսումնասիրում, սոցիալական ծառայությունների մատուցում, սննդամթերքի և հագուստի բաշխում, հոգեբանական աջակցության և խորհրդատվության տրամադրում:

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ

- Կարիքավոր տարեց մարդկանց ամբուլատոր սոցիալ-բժշկական խնամք
- Գթություն
- Սոցիալ - հոգեբանական աջակցություն երեխաներին և միայնակ փախստական ծերերին
- Սիրիահայ երեխաների կայուն զարգացումը Հայաստանում
- Երիտասարդների կայուն զարգացումը Հայաստանում
- Սոցիալական հավաքատեղի

ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԹԻՎԸ 822

Կարիքավոր տարեց մարդկանց ամբուլատոր սոցիալ-բժշկական խնամք

2015թ. փետրվարի 1-ից Հայկական Կարմիր խաչի ընկերությունն իրականացնում է «Կարիքավոր տարեց մարդկանց ամբուլատոր սոցիալ-բժշկական խնամքի» ծրագիրը, որը ֆինանսավորվում էր Գերմանական Կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային միավորման կողմից: Ծրագրում ընդգրկված են 72 շահառու Վանաձորից, Գյումրիից, Իջևանից, Նոյեմբերյանից ու Բերդից: Ծրագրի շրջանակներում նշված մարզերի մասնաճյուղերի կամավորները երեք ամիսը մեկ անգամ սննդային փաթեթներ են բաժանել տարեցներին, ամբողջ տարվա ընթացքում օգնել են նրանց տնային գործերում, ցուցաբերել հոգեբանական աջակցություն:

Գթություն

ՀԿԽԸ Սյունիքի մարզային մասնաճյուղը իրականացնում է «Գթություն» ծրագիրը՝ Դանդի Փրեշու Մեթալս Կապան ընկերության աջակցությամբ: Ծրագրի շրջանակներում 200 միայնակ ծեր տարին մեկ անգամ ստանում են սննդային և հիգիենիկ փաթեթներ, առաջին օգնության դեղահաբեր: Անկողնային միայնակ ծերերը փաթեթներն ստանում են տարին երկու անգամ, նրանց հետ կամավորները նշում են Ամանորը, Մարտի 8-ը և ծննդյան տոները:

SOCIAL SUPPORT

Armenian Red Cross Society is implementing various social programs aimed at the lonely, elderly refugees, families of national-socialism victims, most needy dormitory orphans, as well as the improvement of social conditions of disabled children. Works of the ARCS includes number of areas such as investigating social conditions of population, social services, food, clothing, psychological and counseling support.

IMPLEMENTED PROJECTS

- Outpatients social-medical care for the needy elderly people
- Charity
- Psycho-social support to the children and elderly refugees.
- Syrian Armenian Children Resilience program in Armenia.
- Syrian Armenian Youth Resilience Program in Armenia.
- Community room

NUMBER OF BENEFICIARIES 822

Outpatients social-medical care for the needy elderly people

From 1 February, Armenian Red Cross Society has been implementing “Outpatients social-medical care for the needy elderly people” project with the support of Baden Wurttemberg Provincial Branch of the German Red Cross.

72 beneficiaries were included in the project from Vanadzor, Gyumri, Ijevan, Noyemberyan and Berd.

In the frames of the project, ARCS volunteers of the mentioned branches provided with the food parcels in every 3 months, as well as psychosocial support throughout the year.

Charity

ARCS Syunik Regional Branch implements “Charity” project with the support of Dandee Precious Metals Kapan Company. In the frames of the project, 200 lonely elderly receive food and hygiene parcels, and basic medicines once a year. 30 lonely invalid elderly receive the same parcels for 2 times a year. Red Cross volunteers celebrate New Year, March 8 and the birthdays of the elderly.

Սոցիալ - հոգեբանական աջակցություն երեխաներին և միայնակ փախստական ծերերին

2015թ. փետրվարին վերսկսվեց Սոցիալ-հոգեբանական աջակցություն երեխաներին և միայնակ փախստական ծերերին ծրագիրը: Ծրագրում ընդգրկված են 7-14 տարեկան հանրակացարանաբնակ 80 երեխաներ, 120 միայնակ փախստական ծերեր՝ Երևանի երեք և Աբովյանի մեկ հանրակացարանից: Ծրագիրն իրագործվում է 34 կամավորների աջակցությամբ:

Ծրագրի շրջանակներում տարվա ընթացքում կամավորների կողմից իրականացվել են ամենօրյա այցելություններ տարեցներին և երեխաներին, կազմակերպվել են կրթական դասընթացներ, 5 մշակութային և սոցիալական միջոցառում՝ երեխաների, 5 միջոցառում՝ տարեցների համար, այդ թվում՝ երեխաների համար կազմակերպվել է ամառային ճամբար, նշվել է երեխաների և տարեցների միջազգային օրը: Տարվա ընթացքում տարեցներին տրամադրվել են ամենամսյա սննդի փաթեթներ, եռամսյակը մեկ անգամ՝ հիգիենիկ պարագաների փաթեթներ, ձմռան ամիսներին կատարվել է էլեկտրաէներգիայի վճարի մասնակի փոխհատուցում, ծննդյան օրվա կապացությամբ տրվել են նվերներ:

Ծրագիրը նպաստել է միայնակ փախստական ծերերի և երեխաների սոցիալական ներգրավվածությանը, հասարակությանը ինտեգրմանը և տնային պայմանների բարելավմանը, ինչպես նաև հնարավորություն է ստեղծել խորացնելու ազգային մշակույթի և ծիսական տոների մասին գիտելիքները:

Սիրիահայ երեխաների կայուն զարգացումը Հայաստանում

2014 թ.-ից Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ Դանիական Կարմիր խաչի հետ համագործակցությամբ իրականացնում է «Սիրիահայ երեխաների կայուն զարգացումը Հայաստանում» ծրագիրը, որը հիմնված է Կարմիր խաչի/Կարմիր մահիկի միջազգային ֆեդերացիայի /ԿԻՄՖ/ և «Սեյվ դը Չիլդրեն» հիմնադրամի կողմից համատեղ մշակված մեթոդի վրա: ՀԿԻՄԸ կամավորները տվյալ մեթոդական ձեռնարկի հիման վրա դասընթացներ են կազմակերպում Երևանի թվով 10 դպրոցներում:

Այս տարի ծրագրում ներգրավված էր շուրջ 200 սիրիահայ երեխա: Ծրագրի նպատակն է խթանել սիրիահայ երեխաների ինտեգրումը և կայուն զարգացումը Հայաստանում: Ծրագրի շրջանակներում երիտասարդ կամավորների կողմից կազմակերպվել են ինտերակտիվ պարապմունքներ՝ սիրիահայ և տեղացի երեխաների մասնակցությամբ: Պարապմունքների ընթացքում երեխաներն անդրադառնում են այնպիսի խնդիրների, ինչպիսիք են վախի և սթրեսի հարթահարումը, շրջակա միջավայրի ճանաչումը, ապագայի կառուցումը: Ծրագրի շրջանակներում իրականացվում են նաև մշակութային և համայնքային միջոցառումներ: Յուրաքանչյուր դպրոցում իրականացվել է մեկ մշակութային միջոցառում /ընդհանուր՝ 10/, երեխաները այցելել են ժողովրդական արվեստի թանգարան, որը հնարավորություն է ընձեռել նրանց ավելի լավ ճանաչելու սեփական մշակույթը, իսկ ավելի փոքր տարիքային խմբերը դիտել են հայալեզու մուլտֆիլմեր և ամանորյա ներկայացումներ:

Երիտասարդների կայուն զարգացումը Հայաստանում

2015 թվականին մեկնարկեց Երիտասարդների կայուն զարգացումը Հայաստանում ծրագիրը, որը Հայկական Կարմիր խաչի ընկերությունն

Psycho-social support to the children and lonely elderly refugees

There are 80 children, aged 7-14 and 120 lonely elderly people /from #3 dormitory of Yerevan and #1 dormitory of Abovyan city/. 34 volunteers involved in the program. In the framework of this program volunteers visited elderly people and children on daily basis. Educational activities, 5 cultural and social events, summer camp for children and 5 events for elderly people were organized, as well as International Day for Protection of Children and International Day of Older Persons were celebrated. During the year elderly people were monthly provided with food parcels and with hygienic parcels, once every three months. The program also partially covered electricity costs in the winter months. Also birthday presents were distributed to the elderly people.

Activities implemented in the framework of this program promote to the integration of elderly and children refugees into society and improvement of living conditions, the program also gives opportunity to gain new knowledge about local culture.

Syrian Armenian Children Resilience program in Armenia

Armenian Red Cross Society, in cooperation with the Danish Red Cross, implements “Syrian Armenian Children Resilience program in Armenia” project which is designed on the method developed jointly by RC/RC Federation /IFRC/ of National Societies and Save the Children Fund. Volunteers of ARCS conduct weekly sessions in 10 schools of Yerevan. This year, for about 200 Syrian-Armenian children were involved in the program. The project aims to support the integration and resilience of Syrian-Armenian children in Armenia. In the framework of this program interactive sessions have been organized with the participation of Syrian-Armenian and local children. During the sessions children discuss such issues as overcoming stress and fears, studying environment, future plans etc. In the framework of the program cultural and community events were also organized. One cultural events was organized in each school. Children visited the Folk Art museum which gave them opportunity to know their culture better and the smallest ones visited cinemas and theaters to watch New Year performances.

Syrian Armenian Youth Resilience Program in Armenia

In 2015 Armenian Red Cross Society, in corporation with Danish Red Cross and Roskilde foundation started Youth Resilience program. This program aims to improve psychosocial well-being of youth and give opportunities for youth to be youth. At the beginning of the program Syrian-Armenian youth took part in the “Innovative camp”, and during this camp they learnt about the project, its goals



իրականացնում է Դանիական Կարմիր խաչի և դանիական «Ռոսկիլդե» Հիմնադրամի հետ համագործակցությամբ: Ծրագրի նպատակն է բարձրացնել սիրիահայ երիտասարդների սոցիալ-հոգեբանական բարեկեցությունը և հնարավորություն տալ նրանց զգալու երիտասարդության ուժը: Ծրագրի սկզբում Սիրիահայ երիտասարդները մասնակցեցին «Նորարար» ճամբարին, որի ժամանակ նրանք ավելի մանրամասն ծանոթացան ծրագրին, նպատակներին և միջոցառումներին: Այնուհետև նրանց համար և նրանց գաղափարների հիման վրա պատրաստվեց «Ապահով տարածք», որի ձևավորումը լիովին վստահվել է իրենց: Տվյալ տարածքում նրանք անցկացնում են հանդիպումներ, կազմակերպում քննարկումներ և կինոդիտումներ, և, իհարկե, հետաքրքիր ժամանակ անցկացնում: Ծրագրի շրջանակներում երիտասարդներն իրենց հասակակիցների համար կազմակերպում են քննարկում/քննալծեր՝ արդի թեմաների վերաբերյալ: Ծրագրում գործում են խմբակներ՝ թատրոնի, պարի և երգի, որին միանալով երիտասարդները հնարավորություն ունեն գբաղվելու իրենց նախասիրություններով և զարգացնել իրենց գիտելիքներն ու հմտությունները: Յուրաքանչյուր խմբում երիտասարդների հետ աշխատում են հայտնի դերասաններ, պարուսույցներ և երգահաններ:

Սոցիալական հավաքատեղի

Սեպտեմբերի 28-ին տեղի ունեցավ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի Հատիսի 4-րդ նրբանցքի ճարտարագիտական քոլեջի հանրակացարանի՝ Հայկական Կարմիր խաչի ընկերության /ՀԿԽԸ/ կողմից վերանորոգված հանգստի և ժամանցի սենյակի բացումը: Միջոցառմանը ներկա էին ՀԿԽԸ Գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյանը, ՀՀ ԱԻ փոխնախարար Հայկարամ Մխիթարյանը, Հայաստանում Լիտվայի դեսպան Էրիկաս Պետրիկասը և Հայաստանում Գերմանիայի Դաշնության դեսպանատան կցորդ Աննամարի Կուլմանը, այլ հյուրեր:

Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Սոցիալ-հոգեբանական աջակցություն երեխաներին և միայնակ փախստական ծերերին» ծրագրի շրջանակներում նախատեսված էր ծառայությունների մատուցման համար տրամադրված տարածքի վերանորոգումը, սակայն, ՀՀ ԱԻ նախարարության կողմից տրամադրված 40 քառ.մ մակերես ունեցող տարածքի վերանորոգման աշխատանքների իրականացման համար լրացուցիչ միջոցների անհրաժեշտություն առաջացավ: Այդ միջոցները հայթայթվեցին Գերմանական դաշնության և Լիտվայի դեսպանատների կողմից տրամադրվող փոքր դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում:

and activities in details. Then the “Safe Space” was built ,and the idea of the design of “ Safe Space” was theirs. In the Safe space they conduct meetings, discuss different topics and spend their good time. In the framework of this project they are organizing debate/ discussion clubs for their peers. Also there are drama/ music/ dance clubs which give them opportunity to do what they love, to gain new knowledge, as well as to improve their skills. In these clubs they are working with famous experts.

Community room

On 28 September, the opening of newly renovated activity room by Armenian Red Cross Society /ARCS/, took place in Hatis 4th lane Engineering College dormitory in Abovyan city, Kotayk region. Dr. Anna Yeghiazaryan, ARCS Secretary General, Haykaram Mkhitarian, RA MES Deputy Minister, Erikas Petrikas, Ambassador of Lithuanian Embassy in Armenia and Annemarie Kulmann, Attache of the Embassy of the Federal Republic of Germany attended the event.

In the frames of Armenian Red Cross Society “Psycho-social support for children and lonely elderly refugees” project the renovation of the space for providing services was designed, however, for the renovation works of the 40m² area provided by RA Ministry of Territorial Administration and Extreme Situations /MES/ additional funding was needed. The needed funds were raised due to the German Federation and Lithuanian Embassies in RA, in the frames of Small Grant Projects.

Lilly



International Federation
of Red Cross and Red Crescent Societies



ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈՅԻ ՄԱՍԻՆ
տեղեկատվական ձեռնարկ



Lilly



International Federation
of Red Cross and Red Crescent Societies

ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈՅԻ
տեղեկատվական ձեռնարկ



ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹՅՈՒՆ

Այսօր մարդկության առջև ծառայած են մի շարք արդիական առողջապահական խնդիրներ, որոնք պահանջում են հրատապ արձագանք և լուծումներ: Այդ խնդիրներից են տուբերկուլյոզը, ՁԻԱԳ-ը, հեպատիտը և թմրամոլությունը: Հայկական Կարմիր խաչի ընկերությունն ակտիվ պայքար է մղում այս հիվանդությունների դեմ:

Պայքարի նպատակն է կանխարգելել նշված հիվանդությունները և նվազեցնել թիրախային խմբերի խոցելիությունը դրանց նկատմամբ, աջակցել շահառուների բուժման ընթացքին՝ խթանելով գործընթացի հետևողականությունը:

Կանխարգելիչ միջոցառումներից են լուսաբանումը և կրթումը, որոնք բարձրացնում են իրազեկվածության մակարդակը թե՛ հանրության, և թե՛ շահառուների շրջանում և նպաստում այդ հիվանդների հանդեպ խտրականության և խարանի դրսևորումների վերացմանը:

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ

- Համայնքների դիմակայության բարձրացում ՄԻԱՎ-ի և բնական աղետներին հաջորդող վարակիչ հիվանդությունների նկատմամբ
- ՏԲ հիվանդների կարողությունների հզորացում
- Տուբերկուլյոզով հիվանդներին սոցիալական աջակցության տրամադրում
- Առողջ ապրելակերպ. ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելում և վերահսկում

ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԹԻՎԸ 3775

Համայնքների դիմակայության բարձրացում ՄԻԱՎ-ի և բնական աղետներին հաջորդող վարակիչ հիվանդությունների նկատմամբ

Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից «ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանում» ծրագիրն իրականացվում է Ամերիկյան Կարմիր խաչի ֆինանսական աջակցությամբ: Ծրագրի թիրախն են երիտասարդներն ու ՄԻԱՎ-ի կանխարգելումը: Ծրագրի նպատակն է նվազեցնել ՄԻԱՎ-ի նոր դեպքերը /հիվանդացությունը/ և 15-23 տարեկան երիտասարդների և երիտասարդ միզանտ գույզերի համար ապահովել ՄԻԱՎ-ի կանխարգելման ավելի նպաստավոր միջավայր:

2015 թվականին Ամերիկյան Կարմիր խաչի ֆինանսավորմամբ իրականացվող ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանում ծրագրին ավելացվել է նոր բաղադրիչ՝ ուղղված այն վարակիչ հիվանդությունների տարածման կանխարգելմանը, որոնք հաջորդում են բնական աղետներին: Ծրագրի թիրախ համայնքներ են համարվել Վանաձորը և Գյումրին: Քանի որ ՄԻԱՎ-ի կանխարգելման խնդիրները ևս ծրագրում ներառված են, 2015 թվականի վերջին 6 ամսվա ընթացքում, որը ծրագրի իրականացման առաջին կիսամյակն էր, շարունակվել են ՄԻԱՎ-ի կանխարգելմանն ուղղված միջոցառումները: Վանաձորում և Գյումրիում հիմնված խորհրդատվական կենտրոններում երիտասարդ

HEALTH AND CARE

Today the humanity is facing a number of actual health problems which require urgent addressing and solution. These problems are tuberculosis, HIV/AIDS, hepatitis and drug addiction. The Armenian Red Cross Society actively fights against these diseases.

The overall goal is to prevent the mentioned diseases and reduce the vulnerability of target groups, support the beneficiaries' treatment course through encouraging treatment adherence.

Means of prevention include dissemination and education, raising awareness both among general public and among beneficiaries and reducing stigma and discrimination.

IMPLEMENTED PROJECTS

- Strengthening community resilience to HIV infection and communicable diseases associated with natural disasters
- Empowering people with TB
- Social support to TB patients
- Healthy lifestyle. Non communicable diseases prevention and control

NUMBER OF BENEFICIARIES 3775

Strengthening community resilience to HIV infection and communicable diseases associated with natural disasters

The project of Armenian Red Cross Society on HIV prevention in Armenia is implemented by financial support of American Red Cross. The project is targeted healthy young population and actually is primary prevention of HIV. The goal of the project is to reduce new cases of HIV /morbidity/ and ensure more supportive and favorable environment for HIV prevention among youth aged 15-23 and young couples from migrants families.

For the period 2015-2016 in the project except of the activities towards prevention of HIV infection among young people there were added components aiming to increase population awareness on health related issues after natural disasters in vulnerable communities. Vanadzor and Gyumri are the target areas of the project. First half of the project time period was dedicated to HIV prevention. Counseling centers continue providing anonymous consultations to young people and young couples from migrant families, consultation centers are providing to beneficiaries regular



զույգերին տրամադրվել է խորհրդատվություն, ավելին քան 100 հոգի մասնակցել է հարց/պատասխան սեսիաների, այցելուներին տրամադրվել են տեղեկատվական նյութեր, պահպանակներ: Իրականացվել են հանդիպումներ ՀԿԽԸ կամավորների հետ ՄԻԱՎ-ի հարցերով, իրականացվել են հավասարը հավասարին սկզբունքով տեղեկատվական սեմինարներ ուսումնական հաստատություններում սովորող 15-23 տարեկան երիտասարդների շրջանում: ՄԻԱՎ-ի դեմ պայքարի միջազգային օրը, դեկտեմբերի 1-ը այս տարի նշվել է UNAIDS-ի հետ համագործակցությամբ, «Վերաբերում է անգամ նրանց, ում թվում է, թե չի վերաբերում» կարգախոսի ներքո և նպատակ է ունեցել խթանել ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունը: Օրվա ընթացքում Վանաձորում և Գյումրիում տեղի են ունեցել իրազեկման միջոցառումներ, որի ընթացքում մասնակիցներին տրամադրվել են նաև «կանաչ քարտեր»՝ տվյալ համայնքներում ՄԻԱՎ-ի վերաբերյալ անվճար և անանուն հետազոտություն իրականացնող հաստատությունների հասցեների և կոնտակտների նշումով:

ՄԻԱՎ-ի վերաբերյալ իրազեկման միջոցառումների և տեղեկատվական սեմինարների միջոցով ավելի քան 3000 երիտասարդ ստացել է համապատասխան տեղեկատվություն ՄԻԱՎ-ի կանխարգելման վերաբերյալ: Մշակվել և տպագրվել է տեղեկատվական նյութեր՝ ուղեցույցներ և բուկլետներ, բնական աղետներին հաջորդող վարակիչ հիվանդությունների կանխարգելման վերաբերյալ, որոնց հիման վրա 2016 թվականի առաջին եռամսյակում կիրականացվեն կրթական միջոցառումներ՝ ՀԿԽԸ կամավորների և թիրախ համայնքների երիտասարդների համար:

ՏԲ հիվանդների կարողությունների հզորացում

«ՏԲ հիվանդների կարողությունների հզորացում» ծրագիրն իրականացվել է Միջազգային Կամիր Խաչի և Կարմիր Մահիկի Միջազգային Ֆեդերացիայի հետ համագործակցությամբ և «Էլյա Լիլի և կոմպանի» կազմակերպության ֆինանսավորմամբ: Ծրագրի շահառուները ՀՀ Կոտայքի մարզում գրանցված և բուժում ստացող բոլոր ՏԲ հիվանդներն են: Ծրագրի նպատակը հիվանդների և նրանց հարազատներին տեղեկատվության տրամադրումն է՝ տուբերկուլյոզին ուղղված որոշումների կայացմանը և դրանց կիրարկմանը նրանց մասնակցության խթանումը, խարանի և խտրականության նվազեցումը: 2015 թվականի ընթացքում ամսական միջինում 75 ՏԲ հիվանդ և նրանց հարազատները ստացել են հոգեբանական աջակցություն, մասնակցել են կրթական հանդիպումներին: Խարանի նվազեցման նպատակով ծրագրի շրջանակներում թարգմանվել, տեղայնացվել և տպագրվել է Միջազգային ՄԻԱՎ/ՁԻԱՀ դաշինքի և «Չամբարտ» կազմակերպության համագործակցությամբ ստեղծված և խարանի նվազեցմանը ուղղված գործիքներ և վարժություններ պարունակող ձեռնարկ, որը կիրառվել է հանդիպումների ընթացքում: Ծրագրի շրջանակներում 2015 թվականի մարտի 24-ին Տուբերկուլոզի դեմ պայքարի միջազգային օրվան նվիրված միջոցառումներ են իրականացվել Կոտայքի մարզի Աբովյան քաղաքում, շախմատի դպրոցին հարող պուրակում տեղադրվել է տեղեկատվական վահանակ, ՀԿԽԸ երևան քաղաքի և Կոտայքի մարզային մասնաճյուղի կամավորները գրուցել են անցորդների հետ, բաժանել են տուբերկուլյոզը լուսաբանող տպագիր նյութեր, պատասխանել են նրանց հետաքրքրող հարցերին:

question/answer sessions as well. ARCS volunteers who were trained as peer educators continue providing information sessions in universities and colleagues of the target cities among 15-23 year old young people. During the second half of 2015 over than 3000 young people reached by information on HIV prevention. During informational sessions on safe behavior condoms are distributed. Stigma and discrimination topic is included in the agenda during the peer to peer educational sessions. Beneficiaries are also provided psychological and peer consultations on the basis of consultation centers on the issues to formulate appropriate behavior towards PLWH. On December 1, 2015 Armenian Red Cross Society celebrate the Worlds AIDS Day jointly with UNAIDS under the slogan "It refers also to those who seems to have nothing to do with it" and dedicated to promote HIV testing among general population. During the events in Vanadzor and Gyumri special "green cards" were distributed with the information on anonymous and free of charge HIV testing. During this period of the project booklets and manuals for ARCS volunteers on prevention of communicable diseases associated with natural disasters were developed and printed to conduct trainings and information sessions among young population of the target areas during coming period.

Empowering people with TB

The project "Empowering people with TB" currently implemented in the Kotayq region of Armenia. The project implemented with the cooperation with International Federation of Red Cross and Red Crescent Societies and financed by the Lilly MDR-TB Partnership. The goal of the project is to ensure active participation of TB affected people in TB care and prevention policy development and enforcement via educational activities, psychosocial support, improved communication and decreased stigma and discrimination in the affected communities. During the 2015 nearly 75 beneficiaries each month participated in the educational events and received psychological support. To decrease stigma and discrimination, special tool with exercises on stigma and discrimination developed and published by Zambart project and International HIV/ AIDS Alliance, translated to Armenian and used to train ARCS volunteers, health workers and community members.

On March 24, 2015 Armenian Red Cross Society organized an awareness campaign dedicated to World Tuberculosis Day. In the park near to the Abovyan city Chess school, Kotayq Region informative pavilion was installed, where Armenian Red Cross Society staff and volunteers were distributing printed materials on tuberculosis issues and were answering peoples' questions. On the site, passersby could get informed of the ways of infection and treatment of tuberculosis, also take a picture near the banner with the Chamomile image, as a symbol of the fight against TB, marking the role of each in the fight against the disease.

Տուբերկուլոզով հիվանդներին սոցիալական աջակցության տրամադրում

2015 թվականին ՀԿԽԸ-ն շարունակել է իր գործունեությունը ՏԲ ոլորտում՝ հանրապետության ամբողջ տարածքում իրականացնելով «Տուբերկուլոզով հիվանդներին սոցիալական աջակցության տրամադրում» ծրագիրը, որը «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլոզի ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մի մասն է: Ծրագիրը ֆինանսավորվում է Գլոբալ հիմնադրամի կողմից, դրամաշնորհի հիմնական ստացողը ՀՀ առողջապահության նախարարությունն է, իսկ ենթաստացողը՝ ՀԿԽԸ-ն:

Ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ հիմնական միջոցառումները.

- ՀՀ տարածքում արձանագրված և բուժում ստացող բոլոր ռեգուլյար ՏԲ հիվանդներին սննդային և հիգիենիկ փաթեթների տրամադրում՝ բուժման հետևողականության ապահովման նպատակով
- ՀՀ տարածքում արձանագրված և բուժում ստացող բոլոր դեղակայուն ՏԲ հիվանդներին սննդային և հիգիենիկ փաթեթների տրամադրում՝ բուժման հետևողականության ապահովման նպատակով
- Հատկապես խոցելիներին, կարիքների գնահատման հիման վրա, ծնուն 3,5 ամիսների ջեռուցման ծախսերի փոխհատուցում
- Բուժում ստացող բոլոր դեղակայուն ՏԲ հիվանդներին դեղերի վնասակար ազդեցությունը նվազեցնելու նպատակով հյուսիսի տրամադրում
- Ամենամյա կրթական-խորհրդատվական սեմինարների կազմակերպում ՏԲ հիվանդների համար՝ բուժման հետևողականությունը բարելավելու նպատակով
- Բժշկի ամենօրյա հսկողությամբ /DOT/ բուժում ստանալու նպատակով բուժման ընթացքում բոլոր հիվանդների, ինչպես նաև տնային այցի դեպքում՝ բուժբույրերի տրանսպորտային ծախսերի փոխհատուցում:
- Յուրաքանչյուր շաբաթ թարմ սննդային փաթեթներ են տրամադրվել նաև քրեակատարողական հիմնարկներում արձանագրված ՏԲ հիվանդներին:

Ծրագիրը ավարտվել է 2015 թվականի հունիսին, նշված 6 ամիսների ընթացքում ռեգուլյար ՏԲ հիվանդներին բաշխվել է 2355 սննդային և 1068 սննդային հիգիենիկ փաթեթ, դեղակայուն ՏԲ հիվանդներին բաշխվել է 2136 սննդային և 1068 հիգիենիկ փաթեթ:

Առողջ ապրելակերպ. ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելում և վերահսկում

«Առողջ ապրելակերպ. ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» ծրագիրը մեկնարկել է 2015թ.-ի հոկտեմբեր ամսին: Այն իրականացվել է Հայկական Կարմիր խաչի Երիտասարդ կամավորների ակտիվ ներգրավվածությամբ:

Ծրագրի նպատակն է բարձրացնել հասարակության տեղեկացվածության մակարդակը առողջության համար վնասակար վարքագծերի վերաբերյալ, ինչպես նաև խթանել առողջ ապրելակերպի որդեգրումը: Որպես թիրախային խմբեր՝ ընտրվել են Երևան քաղաքի, Կոտայքի և Արմավիրի մարզերի համայնքների ներկայացուցիչներ:

Ծրագրի շրջանակներում ՀԿԽԸ կամավորների համար կազմակերպվել է 3-օրյա դասընթաց, որտեղ կամավորները ոչ միայն տեսական գիտելիքներ են ձեռք բերել, այլ նաև խաղերի միջոցով՝ ստացել են գործնական հմտություններ և «Առողջության թերթիկների» միջոցով՝ հնարավորություն են ունեցել

Social support to TB patients

During the 2015 Armenian Red Cross Society continued providing social support throughout the country to all registered TB patients in the frames of the program "Social support to TB patients", as a sub recipient of the Global Fund country grant "Strengthening of the National TB Control Program in the Republic of Armenia". The program is implemented in the following directions:

- Provision of food and hygienic parcels to TB patients in Yerevan and RA regions with the purpose to adherence.
- Provision of fresh food parcels each week to the TB patients registered in penitentiary system.
- Provision of financial support to cover heating cost during 3.5 months of winter period to especially vulnerable /based on needs assessment/ MDR patients .
- Provision of juice to all MDR patients during the whole period of their treatment to reduce the harmful effects of drugs. increase treatment
- Implementation of monthly educational consultative trainings for TB patients with the purpose to increase treatment adherence
- Provision of transportation costs to TB/MDR patients or nurses within Directly Observed Treatment /DOT/ strategy.

The last month of the entire program was June 2015. During the first 6 months of 2015 to regular TB patients 2355 food and 2355 hygienic parcels were distributed, and 2136 food and 1068 hygienic parcels were distributed to MDR-TB patients.

Healthy lifestyle. Non communicable diseases prevention and control Healthy lifestyle

Non communicable diseases prevention and control program has been launched in October 2015. It was implemented with the active participation of Armenian Red Cross Society youth volunteers. The purpose of the program is to raise the awareness of the population about the harm that prejudicial and risky behaviors cause to the health, and to motivate people to adopt healthy lifestyle. As target groups were chosen community members from Yerevan city and Kotayq and Armavir regions. Within the scopes of the program 3-day training was organized for ARCS volunteers, which served for not only raising the theoretical knowledge but also gaining practical skills through various interactive games. During the training the Volunteers were given a chance to evaluate their own health status with the help of "Assessment cards". Having comprehensive knowledge in hand volunteers have organized various trainings in Kotayq and Armavir regions and in Yerevan as well as discussion meetings with private and

գնահատելու իրենց սեփական առողջությունը: Օգտագործելով դասընթացի ընթացքում ստացված համապարփակ գիտելիքները՝ կամավորները կազմակերպել են բազմաթիվ դասընթացներ Կոտայքի և Արմավիրի մարզերում և Երևան քաղաքում, ինչպես նաև՝ հանդիպում-քննարկումներ պետական և մասնավոր հատվածի, այդ թվում՝ Երևանի քաղաքապետարանի, ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության, Հայկական Բիզնես բանկի աշխատակիցների և Հայաստանի ամերիկյան համալսարանի ուսանողների համար: Ընդհանուր առմամբ լուսաբանվել են ավելի քան 500 մարդ:

ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանում

Հայկական Կարմիր խաչի Ընկերությունն Իտալական Կարմիր խաչի աջակցությամբ 2015թ. շարունակել է իրականացնել «ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանում» ծրագիրը Երևանում և Լոռու մարզի Վանաձոր քաղաքում, որի նպատակն է բարձրացնել խոցելի խմբերին մատուցվող վնասի նվազեցման ծառայությունների որակը՝ կանխարգելման, բուժման ու խնամքի միջոցով:

